ԱՄԱՆՈՐՅԱ ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ս/թ. դեկտեմբերի 27-ին, ժամը 16:00-ին Հայաստանի շախմատի ակադեմիան կազմակերպում է ամանորյա կայծակնային շախմատի մրցաշար:

Մասնակիցներ

Մրցաշարին կարող են մասնակցել առնվազն երրորդ կարգ ունեցող շախմատիստները:
Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ համաձայն ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների:

Ժամակարգ

3 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով, անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/ և սև գույնով խաղացած պարտիաների քանակով:

Մրցանակային ֆոնդ

Մրցանակային ֆոնդը կկազմի մուտքավճարների 70%-ը:

Մրցանակներ					
Հիմնական	**I**	**II**	**III**	**IV**	**V**
Լավագույն արդյունք ցույց տված **շախմատիստուհի**					
Լավագույն արդյունք ցույց տված **կարգային** մասնակից					

Լավագույն արդյունք ցույց տված մինչև **12** տարեկան մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված մինչև **12** տարեկան աղջիկ մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված մինչև **10** տարեկան մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված մինչև **10** տարեկան աղջիկ մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված մինչև **8** տարեկան մասնակից					
24-րդ տեղ գրաված մասնակից					

Մուտքավճար

Կոչում/գործակից	**Մուտքավճար**
ՄԳ, ՄՎ, ԿՄԳ, ԿՄՎ	Անվճար
2100 և բարձր վարկանիշ ունեցող մասնակիցներ	2 500 ՀՀ դրամ
I և II, III կարգ – 2100 վարկանիշ ունեցող մասնակիցներ	3 000 ՀՀ դրամ

Հեռախոսահամար՝ **010-448479, 043-448473:**

Ցուցակագրումը մինչև **դեկտեմբերի 26-ը, ժամը 18:00-ն:**